

շատ ունեն միմյանց համեմատութեամբ, որ նույնպէս ցույց է տալիս, որ նրանք միմյանցից չեն արտագրել: Նույնն է ապացուցում նաև մեր ժողովածուի № 13 արձանագրութեան համեմատութիւնը:

<p>Ղրիմեցի Ի թագաւորութեանն վրաց... և ամիրսպասա- լարութեանն Ջաբարէի և Իւանէի եղբար իւրոյ, Ի ՈՅ թվոյ, ևս Քուրդս, Հա- սան, Համագաստս, Սար- գիս՝ որդիքս Սմբատայ՝ որդոյ Համագաստոյ մարդ- պանի տուաք զՄաթուշայ կէսն ի մեր հայրենեացս, ի մեր հողէս տուաք ի Սանահինս՝ մեր մեռելոց Սանահինս, և մեր արեւշա- տութեան: Ընկալան Յով- հանէս և միւրանքս (և այլն):</p>	<p>Ջալալյանց Ի թագաւորութեան վրաց Գուրգի, յամիր սպասալարութեան Ջա- բարէի, և Իւանէի եղ- բարն իւրոյ, Ի թուին ՈՅ: Ես Քուրդս, Հասան, Համագաստ, Սարգիս, որ- դիքս Սմբատայ, որդւոյ Համագաստայ մարծպա- նայ տուաք զՄաթուշայ կէսն ի մեր հայրենեաց ի մեր հողոտայքս ի Սա- նահին մեր մեռելոց հո- թեան: Ընկալաք հայր Յովհանէս և եղբարքս (և այլն):</p>
---	---

Արտագրութեան ժամանակ Մարուշայ — Մրնաշէն-ի, հողէս տուաք — հողոտայքս-ի, միւրանքս — եղբարքս-ի չեն փոխվի:

Բերենք նաև մի հատված մեր ժողովածուի № 15 արձանագրութիւնից:

<p>Ղրիմեցի Ես Դաւիթ իշխան որդի Շոթոսկայ գնեցի Ջու- նագոմուց կէսն, և շինա- կան մի, Հալալաշէնի մշակն և մասն ծուխ, և զսպիտակ սուրբ նշան (և այսպէս անվերջ):</p>	<p>Ջալալյանց Ես Դաւիթ իշխան որ- դի Շոթոսկայ գնեցի գՈւնակ գոմոց կէսն և շինականի ի հալալաշին սուրբ նշան...:</p>
---	---

Սակայն, երբեմն նկատվում է, որ Ղրիմեցիի և Ջալալյանցը միևնույն սխալներն են կատարել:

Այսպէս, օրինակ, մեր ժողովածուի № 113 արձանագրութեան մեջ Ի տաւնի Յովսէփս վկայի բառերը ինչպէս Ղրիմեցիին, այնպէս էլ Ջալալյանցը կարգացել են Ի տաւնի սրբոյն կատարիւնէի, որ ակներև սխալ է: Սակայն, այդ սխալը առաջացել է ոչ թէ այն բանից, որ Ջալալյանցն արտագրել է Ղրիմեցուց, այլ ընդհակառակը, Ղրիմեցու հրատարակիչներն իրենց ձեռքի տակ ունեցել

են Ջալալյանցի տպագիր գիրքը և Ղրիմեցուն երբեմն ուղղել են, առանց բուն արձանագրութիւնը հաշվի առնելու, երբեմն էլ տողատակի ծանոթութիւնների մեջ ցույց են տվել Ջալալյանցի վերծանութեան տարբերութիւնները:

Նշանակում է՝ Ջալալյանցը թեև թույլ վերծանող է, բայց ինքնուրույն է, այլապէս անբացատրելի կմնար, թե ինչու հենց նույն 133-րդ արձանագրութեան մեջ Հերենի այգիին Ղրիմեցին ճիշտ է ընթերցել, իսկ Ջալալյանցը սխալ. վերջինս Հերենի (հայրենի) բառը անձնանուն կարծելով գրել է Հերենի այգիին:

Ուրեմն՝ Ջալալյանցը չի օգտվել և չի էլ արտագրել Ղրիմեցուց: Ամենայն հավանականութեամբ, նա չի տեսել Ղրիմեցու աշխատանքը:

Այստեղ անհրաժեշտ է մի անգամ ևս շեշտել Ջալալյանցի անփութ վերաբերմունքը արձանագրութիւնների նկատմամբ: Օրինակ՝ Հաղբատում կանգնեցրած մի խաչքարի արձանագրութեան միացրել է իր դիտողութիւնները և հետո մոռանալով այդ, ամբողջը ներկայացրել է իբրև մի արձանագրութիւն.

«Կանգնեցաւ խաչս ի վերայ քահանայիս Գրիգորայ, ի վերայ դրան շեմոց կուսանաց վանից Հաղպատայ, ի Թուին ՌՃԻէ նորոգեալ է բարեպաշտ իշխանն Ջալ և կին իւր Վարվար»:

Արձանագրութիւնը տեղում վերջանում է Գրիգորայ բառով, մնացածը Ջալալյանցի՝ իր դիտողութիւնն է այն մասին, որ Կուսանաց վանքի մուտքի զլխին կա մի արձանագրութիւն, ըստ որի այդ տաճարը նորոգել է Ջալ իշխանն իւր կնոջ հետ միասին:

1884 թվականին «Արձագանք» շաբաթաթերթում լույս տեսաւ Հովհաննես Քաջբերունու «Ճանապարհորդական հիշատակարան» հոդվածաշարը, որի մեջ կան Սանահնի վանքի 25 արձանագրութիւն: Թեև դրանցից 17-ը առաջին անգամն են հրատարակվել, բայց մեծ մասամբ մեկ-երկու բառից կազմված մանր տապանագրեր են:

1 Դեսուս Քաջբերունուց առաջ, 1872 թվականին, հնագետ-պատմաբան Աղեքսանդր Երիցյանը արդեն հավաքած է եղել Հաղբատի և Սանահնի արձանագրութիւնները: Նա Հաղբատից հրատարակել է «Кавказская Старина» ամսագրի 1872 թվականի № 2-ի՝ 49—52 և № 3-ի՝ 83—88 էջերում, իսկ Սանահնի մասին երկու անգամ հրատարակութիւն է տվել նույն տարւոյ № 1 և 1873 թ. № 4 և 5-ի շաբաթի վերջին երեսներին, բայց ամսագրի հրատարակութեան խափանման պատճառով չի կարողացել տպագրել: